Ըստ Արմեն Այվազյանի՝ ազատագրված տարածքները Հայաստանի անվտանգությունն ապահովող նվազագույն հողակտորն են

08.02.2006 15:57 մեկնաբանություն

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Վերջին 15 տարիների անկախ գոյության փորձը փաստում է, որ Հայաստանը կարողացել է գոյատեւել 42 հազար քառակուսի կիլոմետրանոց, բնական որոշակի սահմաններ ունեցող տարածքի վրա վերահսկողություն հաստատելու շնորհիվ միայն՝ ներառելով Հայաստանը եւ Արցախը՝ ազատագրված տարածքներով հանդերձ:

Սա է Հայաստանի անվտանգությունն ապահովող այն նվազագույն հողակտորը, որից պակաս տարածքում հայոց պետականության գոյությունն այլեւս կարող է անհնար լինել:

Այդ մասին, ըստ «Նոյյան տապանի», փետրվարի 8-ին «Հայաստանի ազատագրված տարածքը եւ Արցախի հիմնախնդիրը» վերլուծական եւ փաստագրական նյութերի ժողովածուի շնորհանդեսի ժամանակ հայտարարեց գրքի խմբագիր, «Հայոց համաշխարհային գործակցություն» կազմակերպության տնօրեն, քաղաքագիտության դոկտոր Արմեն Այվազյանը:

Ըստ նրա՝ ժողովածուի շտապ ստեղծումը պայմանավորված է 2005 թ. վերջին - 2006 թ. սկզբին սաստկացած լուրերով, ըստ որոնց՝ Հայաստանը եւ Ադրբեջանը պատրաստվում են ստորագրել արցախյան հակամարտության կարգավորման հիմնական սկզբունքների մասին մեկ-երկու էջանոց մի նախնական փաստաթուղթ, որը ներկայումս դրված է բանակցությունների սեղանին:

Արմեն Այվազյանը նշեց, որ անգամ ստորագրվելու դեպքում այդ փաստաթուղթը չի կարող իրագործվել, մինչեւ չկնքվի «մեծ համաձայնագիրը», եւ վերջինիս ստորագրումը զուգորդվելու է ՀՀ, ԼՂՀ եւ Ադրբեջանի հասարակությունների դիմադրությամբ: «Այսպիսով, «մեծ համաձայնագրի» հարցը մնալու է առկախ, սակայն ներկայիս փաստաթուղթը, եթե այն ստորագրվի, դամոկլյան սրի պես կախված է մնալու Հայաստանի անվտանգության գլխին՝ միջազգային ասպարեզում վավերացնելով Ադրբեջանի պահանջները»,- հայտարարեց նա:

Ըստ Արցախյան պատերազմի հերոս, գեներալ Արկադի Տեր-Թադեւոսյանի՝ այսօր ղարաբաղյան հարցում առկա է երկու տարբերակ՝ կա՛մ ստորագրել, կա՛մ չստորագրել առաջարկված աշխատանքային փաստաթուղթը: Նա կոչ արեց չստորագրել փաստաթուղթը:

Արկադի Տեր-Թադեւոսյանն առաջարկեց քննարկել ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը վերաբերող նոր տարբերակ, որի հիմքում ընկած կլինի հարցի իրավական կողմը. «Միայն այդ դեպքում մենք

կարող ենք խոսել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման մասին:

Ժողովածուն ի մի է բերում ազատագրված տարածքի խնդրին նվիրված փորձագիտական միտքը: Դրանում զետեղված են երեք տասնյակ հեղինակների վերլուծական եւ փաստագրական նյութեր: